

հետն առաւ թնդանօթներ ու արշաւեց Տիմ—Տիմ բերդի վրայ
Խան Աւտալին ջախջախելու. պաշարեց Տիմ—Տիմը երեք ամիս.
Բերդակաճանները դուրս գալով կռուի, իրար կը կոտորէին ու
նորէն ներս կը քաշուէին: Իսկ պաշարողները ռումբեր կը նետե-
տէին բերդէն ներս: Տիմ—Տիմի եօթ հարիւր մարդիկնիրէն
սպանելով սպանելով սպառեցին ու թողին միայն 70 մարդ:
Մնունգի պակասութեան պատճառով կը տիրէ սովը. Խան
Աւտալ կը դիմէ Վանի փաշային օգնութիւն խնդրելու, բայց
չի գտներ, այդ յուսահատ դրութեան մէջ, որպէս զի իրենց
ամբողջ կորուստները արժէք մը ունենան, Կիւհէր—Խանուս
առաջարկ մը կ'ընէ.

«Թող տղամարդիկ բանան դղեկի դուռը, դուրս գան
իրենց տեղերէն ու յարձակուին թշնամու վրայ. մենք կլինեա
ու անոնք որ իրենց մէջ ուժ կը զգան, զէնք կը վերջնենք ու
կը կռուենք ձեր կողքին: Գալով աղջիկներուն ու երիտասարդ
նշանուածներուն որոնք ընդունակ չեն կռուի, թող անոնք ալ
թոյն պատրաստեն, և երբ դուք ամենքդ կորսուիք, անոնք
ալ թող այդ թոյնը կլին թշնամու ձեռքը չիցնալու համար:
Իրենցմէ մէկը թող ի մի հաւաքէ մնացած վառօղները, ու
երբ դղեակը թշնամիներով լեցուի, կրակ տայ վառօղին. մենք
օդը պիտի բարձրանանք, բայց հերետիկոսները՝ ինչպէս Կըզըլ
—Պաշ, պիտի կորսուին նոյնպէս»: Բոլորը ծափահարեցին
Կիւհէր—Խանուսի առաջարկը, ու սկսեցին պէտք եղած կար-
գադրութիւնն ընել: Աման մէկը ինքզինք զոհաբերեց ու պատ-
րաստուեցաւ անխուսափելի մահուան մը:

Ուրբաթ օր մը կէսօրուայ մօտիկ, Խան—Աւտալ, եօթա-
նասուն մարդիկները և քսան եօթ կիները իրար միանալով դղեկի
դուռը, մին միւսին մնաք բարո՛վ ըսելէ յետոյ, մեծ ու փոքր,
երիտասարդ ու ծեր, կին ու ամուսին դուրս կը նետուին ի-
րենց տեղերէն. բոլոր աղջիկներ ու դեռատի կիները հետեւին
թոյն կը վերջնեն ու կ'երթան պարիսպներուն միջանցքները,
դիտելու կռուողներու շարժումը. մինչ Խան—Աւտալի կ'ընը